Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի « Ալվարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա /2 դասաժամ/,կենսաբանություն/2 դասաժամ/, մաթեմատիկա/10 դասաժամ/, անգլերեն/11 դասաժամ/ ,հայոց լեզու և գրականություն/11 դասաժամ/և ֆիզիկա/2 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է/ձև 1 /,

2.Փաստաթուղթ/դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 –րդ հոդվածի 1–ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/,

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները/դրանց առկայության դեպքում/,

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են 2023թ.սեպտեմբերի 6-ից մինչև2023թ. սեպտեմբերի 19-ը ներառյալ,ամենօր՝ժամը 10:00–ից 15:00–ը,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա2023թ. սեպտեմբերի 26-ին ժամը 13:00–ին,ՀՀ Շիրակի մարզի Ալվարի միջնակարգ դպրոցում:Հասցեն՝գ. Ալվար փողոց 1,շենք N 8 վարչական շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 077-71-21-61 հեռախոսահամարով:

<<Ալվարի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ռ.Համբարյան